

փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյն, :
(Ի թուղթն առ Վահան Տէրն Մամի-
կոնէից, տիպ Մոսկուայի):

Սորանից յայտնի է թէ յառաջ ևս
Պաթուղիկէ Լեկեղեցում կային կրօնա-
ւորք, որոց վերակացու էր Վազարէն յա-
ռաջ՝ Լերանիւն ասացեալն Յովհան, և այն-
քան նախանձին էր միաբանից բարգա-
ւաճեալ վեճակը, մինչև շատերը կ'զարէ-
ին Վազարայ վերակացութեանը, և կը-
ջանային նորա ձեռքիցը յափշտակել զայն
իրք խոստանալով Վահանայ Վազարը
արտաքսելու համար. սորանով կարող
եմք ապացուցանել թէ շայրապետական
Լթոռը ի Վլին փոխադրուելէն ետքը,
Վազարչապատայ Լեկեղեցում կայր Ուխտ
միաբանութեան վերատեսչութեամբ զըլ-
խաւորաց՝ մանաւանդ թէ շայրապե-
տաց, որոնք կ'յիշուին Վազարու թղթի
մէջը՝ մինչև նա ինքն Վազար՝ որ Վա-
հանայ հրամանաւ կարգուեցաւ վերակա-
ցու:

Վազարու այս թղթի յառաջաբանէն
զիտեմք, որ Վազարչապատայ Պաթու-
ղիկէ Լեկեղեցին փայտաշէն էր Վազարու
վերակացութեան օրով, որոյ ժամանակ
փայտակերտ Լեկեղեցին հրով փնասուելով
«ի վայրաբար մարդկանէ,» ինչպէս կը վը-
կայէ թուղթը, այս պատճառաւ գնաց
Վազար ի կողմանս Յունաց յԼմիթ քա-
ղաք (Տիարպէքիր), ուր տեսնելով որ
չարանախանձ մարդիկ սուտ բաներ կը
շատացնեն Պաթուղիկէ Լեկեղեցոյ և իւր
ուսման համար, զրեց այն տեղից յիշեալ
թուղթը առ Վահան:

Այս մասին յառաջաբանի զրուա-
ծը*), «Պամեցեալ մեծի իմաստութեանն
Վահանայ Մարզպանի Օջորավարին շա-
յոց տեսուն Մամիկոնէից զնա (զՎա-
զար) իւր առաւել մերձաւոր և սիրելի
առնել, շնորհէր նմա զհոյակապ և զա-
կանաւոր տեղին ի Նոր քաղաքի, որում
անուն էր սուրբ Պաթուղիկէ Լեկեղեցի
վանօքն. և նորա ընկալեալ զբանն Մարզ-
պանին, խնամած էր զտեղին. պատահեաց
նմա կրել տրտմութիւն ի վայրաբար
մարդկանէ. զի ի հրոյ փնասուալ փայտա-
կերտ Լեկեղեցոյն . . . (աստ պակասի մի
թուղթ, որպէս զնի յօրինակին.) յայս-
մանէ կամ եղև նմա զնալ ի կողմանս
Յունաց. հասանէր յԼմիթ քաղաք. և
անդ առ ժամանակ մի զտեղի առնոյր,»
(եր. 37):

(Շարունկէն)

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԱԿԻՔ.
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՅՈՑ
ՅԵՐՈՒՍԱԼԵՄ.

(Շարունկէն):

Ալեքսիս՝ կողակից Բօէմոնդի՝ զկնի մահուան հօր
իւրոյ վերադառնալով յԱնտիօր ձեռնստուութեամբ Պօ-
նի իշխանին Տրապոլսոյ եւ ձոսլին Բ.ի իշխանին Ե-
ղեսիոյ (սա մի խոսվարար եւ ցոփ մէկն էր) բուռն
արկաւ վերստին իւր փառասիրական խորհրդին:
Յուլք խաղաց նորա դէմ ու հաստատեց մի փոխա-

(*) Վազարայ թղթի յառաջաբանութիւնը
իւր հեղինակութիւնը չէ՝ այլ ուրիշ իրեն ժա-
մանակակից մարդու, ինչպէս կերկի

նորդ յԱնտիոք. ապա տրամադրութեամբ սեպհայ Կոստանսիայի ձեռք տուա Բայմօնդին, որ էր երկրորդ որդի Գիլյօսի կոմսի Կիլենի *): Բայց մինչդեռ կորսնէին երիտասարդ իշխանիս յԱնդղիս՝ Պօն Տրապօլոյ կոմսն սպանուելով ի Տաճկաց, թողեց իւրեան յաջորդ իւր որդի Բայմօնդն: Ալեքսիս օժանդակութեամբ իւր քեռ ղշխոյին Մէլիսանդի, որ կը թագաւորէր յերուսաղէմ Յուլիօս փոխանակ՝ ձեռ ձրեց Անտիոքայ կառավարութիւնն: Բողոքի պատրիարքն զնա զրկելու ղիտաւորութեամբ հաւատացրաւ նորան որ Բայմօնդ աւելի նախաձեռար համարելու է իրեն քան իւր զուտորը, պատճառ որ՝ ղեռ չէր հառած յարունս. սակայն հազիւ թէ իշխանն եկաւ յԱնտիոք 1156ին, պատրիարքն սրտակելով Բայմօնդին ընդ Կոստանսիայի, տուա նմա կոմսութիւնն ի ժառանգութիւն՝ որպէս վիճակ պատրիարքական Եկեղեցւոյ:

Ալեքսի կայսրն ղեռ հրաժարական չէր տուած իւր Անտիոքայ կոմսութեան վերայ ունեցած իշխանութիւնից Ռայմօն Ժիլի երդման առթիւ, իւր որդի Յովհաննէս Կոմնենոս 1157ին մտադիր եղել զինու զօրութեամբ հաստատել իւր իրաւունքն, որ կը ժխտէին: Գալով ի Կիլիկիա հարածեց անտի ի Տարսոն եղած Բայմօնդի զօրքն եւ մտաւ Լեւոնի տէրութեան մէջ. Լեւոն չկարողանալով ղէմ ղնել կայսեր, պատճառ որ՝ անմիաբանութիւնն ի ներքս էր սպրդել, ամրացաւ յանտիլ վայրս. կայսրը յառաջ խաղալով տիրեց Միսիսի, Տարսոնի, Ատանայի, հուսկ յետոյ առնելով Անարզարս եւ Վահկայ, երկու կողմից էլ մօտ քիւր անձինք կոտորուեցան: Ի վերջոյ Լեւոն տեսանելով իւր երկրի թշուառութիւնն՝ անձնատուր եղել կայսեր 1157-ին իւր որդւոց Թորոսի եւ Ռուբենի նա ի միասին. այս եղել ի թուականութեան Հայոց 529. Լեւոն զրաւեցաւ ի կենաց ի տանջանս 1141-ին. իսկ պատանին եւ անմեղ նահատակն Ռուբէն իւր գերմարդկային ուժի պատճառաւ զրկուեցաւ յաջաց եւ սպանուեցաւ: Վերոյիշեալ քաղաքը առնելէն ղկնի կայսրն եկաւ եւ պաշարեց զԱնտիոք: Յուր մտածեց առաջ փրկել Տրապօլոյ կոմսութիւնն, որ Զէնկին պաշարել էր: Բայց Աթարէկը խորտակելով նորա բոլոր զօրութիւնքն պաշարեց զՄօնթֆէրրանդ, ուր ա-

պստտանեալ էր թագաւորն: Համայն քրիստոնէսք Պաղեստինոյ աճապարեցին ի փրկութիւն իւրեանց արքայի. բայց շատ անազան . . . առատածեռն Զէնկի արդէն մի պատուաւոր զաշն էր կապել ընդ Յուլիօս, որ վերադարձաւ յերուսաղէմ:

Բայմօնդ ննազանդեց ու խոստացաւ վերանորոգել արեւելեան Կայսրութեան Անտիոքայ մասին եղած որոշումն, երբ Յովհաննէս ի ժառանգութիւն թողէր իւրեան որպէս վիճակ կայսրութեան ղՀալէպ, ղԿեսարիա, ղԵմեսա, ղՀամա, ղոր մտադիր էր առնել Լատին զօրաց օգնականութեամբ: Յայնժամ եւ Յունական զօրքն ձմերեց ի Կիլիկիա:

Ի 1158 ամի 4 ապրիլի վերադառնալով մտաւ ի Սիրիա ու առաւ ղԲուզաս, Կեսարիա եւ այլն. ապա ղալով յԱնտիոք պահանջեց, որ անմիջապէս յանձնեն իւրեան այդ քաղաքը: Այդ միջոցին Զէնկի ետ առաւ ինչ որ կորուսեալ էր: Ճոսլին Բ. փրկեց ղԲայմօնդ այն վարանմունքից, ղոր առթեալ էր նմա կայսեր պահանջմունքն. մի այնպէս աղմուկ եւ շփոթ հանեց, որ Կոմնենոս ղարհուրելով անմիջապէս հրաժարեց եւ վերադարձաւ ի Կ. Պօլիս:

Եւ քանզի այդ միջոցում Կիլիկիոյ վերայ յարձակեցաւ Ահմէտ — Մէլիք Էմիրն՝ որ առեալ էր ի Յունաց Վահկայ, Կապան եւլն, ուստի առաջին ուղեւորութենէն չորս ամ ղկնի վերստին եկաւ Յովհաննէս Կոմնենոս Կիլիկիոյ զործոց կարգադրութիւն ղնելու պատրուակաւ, ու կրկնեց իւր պահանջմունքն Անտիոքայ մասին: Այլ թէեւ պատրաստուում էր զայոց զարնան շարժել իւր զօրութիւնքն, բայց վիրաւորուելով յորսս վարազուց անթշկելի կերպիւ՝ մեռաւ 1142-ին:

— Կայսեր այդ երկրորդ արշաւանաց միջոցին Լեւոնի որդի Թորոս, որ ի ղիպահոջս կար՝ խոյս տալով Կ. Պօլսից հասաւ ի Կիլիկիա, եւ ծանօթացնելով ղինքն Հայոց մի քահանայի միջոցաւ՝ ուրախութեամբ ընդունուեց ազգից. ապա ճեպով ղօրը ղուժարելով յարձակմամբ առաւ Վահկայ, Միսիս, Ատանա, Թիւ, Անարզարս, Ամութ քաղաքքն. եւ հալածելով Յոյնքը իւր եղբարց Ստեփանէի եւ Մլեհի օգնականութեամբ, որք ղառնալով յեղեսիոյ, այս քաղաքիս առմանէն ղկնի վառեցան ի նախանձ վրիժու մահուան իւրեանց հօր եւ եղբօր. եւ Յոյնքը վանելով ի վերոյիշեալ քաղաքաց վերստին հաստատեցին Հայաստանի անկախութիւնն 1144-ին:

(*) Տես. գլուխ Բ:

Պրոֆէն Գ. Հինգերորդ Թագաւոր Երեսնակէն:

Այդ իսկ թուականում մեռաւ նաեւ Ֆուլք որսի մէջ, ուր իւր երկվարը անկանելով ջախջախուեց իւր գլուխը: Արդէն շատ ժամանակ էր, որ Մելիսանդ իւր կինն ի տեղի իւր կիշխէր: Իւր մահուանէն զկնի յանձն առաւ իւր որդւոյ Պրոֆէն Գ. ի խնամակալութիւնն, որ զեռ երեքտասանամեայ էր: Յառաջնում ամի թագաւորութեան սոյն իշխանիս, այս ինքն ի 1144 Ձէնկի պաշարելով զԵդեսիա՝ 28 օրէն զկնի առաւ. այս քաղաքս, որ էր պատնէշ Երուսաղեմայ թագաւորութեան, մնացեալ էր անպաշտպան անխոհեմ ճոպլինից, որ կը զուարճանար ի Թէլպաշիր: Այս պատահարս հրատարակուեցաւ յարարական բանաստեղծաց որպէս յաղթութիւն իսլամութեան ի վերայ թրիստոնէութեան: Ձկնի երկուց ամաց ի 1146 Ձէնկի սպանուեց մի ստրկի մեռամբ. ի տարապարտուց ըրիստոնէայք ուրախութիւն զգեցան նորա մահուան վերայ. քանզի իւր երկու որդիքը բաժանեցին տէրութիւնն. Սեյժուդդին անդրանիկն ժառանգեց Մուսուլի ամաբէկութիւնն, իսկ կրտսերն Նուրդդին, որ կը զիրազանցէր առաքինութեամբ եւ հանձարով իւր հօրից ունեցաւ Հալէպի իշխանութիւնն: Ճոպլին Բ. իշխան Եդեսիոյ 1146-ին յանկարծուստ առաւ զԵդեսիա, բայց Նուրդդին զկնի վեց աւուրց վերստին տիրեց եւ կործանեց զայն ի հիմանց, յաղարած վարելով 16,000 անձինք *):

ԳԼ. 2ՈՐԸՈՐԴ

Երեսնակ Թագաւորութիւնն է 1147.

Գոյժ առմանն Եդեսիոյ, որ վաղ կամ անազան պիտի հետեւէր եւ Երուսաղէմինն՝ արհաւիրք պիտեց ի համայն Երուպա, եւ ազդեց ի նոսա աւիւն զնալ յերկիրն Սուրբ: Ս. Բէրնարդոսի **) այն ժամանակուայ

ամենահնչակաւոր կղերի քարոզութիւնն տարածեց ամենի վերայ մի աստուածեղէն ազդեցութիւն:

Երուսաղեմայ արքայի եւ սեպհաց առ իւրեանց Երուպանակ քարեկամաց նամուկըն զրդուեցին Գաղղիացի ասպետը զնալ յօգնութիւն Սուրբ Երկիրն ըստ նմանութեան հարց իւրեանց: Ի Գաղղիա յայնժամ կը թագաւորէր Լուի Է. երիտասարդն: Այս իշխանս իւր խղճմտանքը բեռնաւորեալ էր մի եղեռնական ոճրով: Իւր հպատակ Շամբաֆի կոստի հետ մարտնչելով եւ առնելով Վիտրի քաղաքն կրակել տուաւ սոյ քաղաքի եկեղեցին, ուր աւելի քան 1500 անձինս, որք ասպատանեալ էին անդ՝ հրոյ ճարակ եղին: Երիտասարդ թագաւորն ի քաւութիւն իւր մեղաց երդուեց ի 1146 ին զնալ յերկիրն Սուրբ: Թէեւ իւր ներհուն նախարար Յիւճեմն նկրտեց արգելուլ այդ ճանապարհորդութիւնը, սակայն արքայն խորհրդակցել ցանկացաւ ընդ սրբոյն Բէրնարի, որ յայտնեց թէ առանց Եւզիմէս Գ. Պապի ոչինչ չէր կարող վճռել. Պապը հասնելով եւ հաւանութիւն տալով ի 1146-ին մի ժողով զուսարուեց, որին կցորդ էին եւ ազնուականք ի Բուրգոյն. այս ժողովս առաջինն է, որոյ զաղղիական մատենադիրք Պարլամէնթ անունն կրտան: Խիստ մեծ եղեւ հանդիսականաց բազմութիւնն. Ս. Բէրնար թագաւորի աջ կողմում մի ամպիոնի վերայ բազմած այնպիսի եռանդով ճառեց, որ ներկայ դատաւորը ցանկացան առ ժամայն մեռնարկել այդ ուղեւորութեանը: Ս. Բէրնար, իւր հետ բերած խաչերն չբաւականանալով, պատահեց իւր լոկի մի մասն եւ բաժանեց. արքայն ի ծունր չոքեալ ընդունեց իւր խաչն, որ Պապն էր ուղարկեալ: Ըստ օրինակի վնհապետին՝ թաղուհին, Բօրէր Լուի Է. ի եղբայրն, Ալֆօնս Թուրուզի կոմսն, Տիէրի Ալապեցի կոմս Ֆրանդրիոյ, Նըվերի, Սուասոնի, Վարէնի կոմսն եւ յովով իշխանք խաչակրուեցան:

Այդ ազդեցութիւնը տարածուեց եւ բոլոր Գաղղիոյ մէջ. Ս. Բէրնար զրեց Պապին — «Ամենասուրբ հայր, զուք հրամայեցիք եւ ես հնազանդեցայ. ձեր

(*) Եդեսիոյ առման վերայ այն ժամանակուայ Գրիգոր Պահլաւունոյ Հայոց հայրապետի եղբայր Ներսէս Ենորհային զրեց զիմաստութեամբ մի բանաստեղծութիւն ողբերգական եւ սրտաշարժ նկարագրութեամբ: Նոյնպէս Գրիգոր ժամանակակից բահանայն խօսելով Եդեսիոյ վերայ ասում է մի տեղ, « Զանգի տեսանելով այնչափ մարդկանց կոտորածն շարժեցաւ ի զութ եւ արգել իւր սուրն ի կոտորմանէ »:

Մաս. Թարգ:

(**) Ս. Բէրնար հիմնիչ հոշակաւոր միարանութեան Բէրնարդեան, ծնաւ յամի 1091 Յօնթէն դիւղում որ ի Բուրգոյն ազնիւ ընտանիքից: Փարիզու այն ժամանակուայ համալսարանում, որոյ մէջ

Երուպիոյ ամենանշտնաւոր ուսուցիչն կը գտանուէին, մի քանի ժամանակ իւր անունն հոշակելէն զկնի առանձնացաւ միայնակեաց կեանք վարելու. անդ եւս շուտով հոշակուեց իւր սրբութեան առնեն. յամենայն կողմանց կը վազէին խորհուրդ հարցանել ի նմանէ, որպէս եւ 1150-ին Գաղղիոյ վնհապետ Լուի Գէրն դատաւոր անուանեց նորոն վնոել Անակէ եւ Ինիօսան սպայերի գաղտը: Անոր գալով ի Միլան ժողովորդը եւ կղերն առաջարկեցին իւրեան արքեպիսկոպոսութեան դահն, բայց նա մերժեց:

իշխանութիւնն օրհնեց իմ հնազանդութիւնն. քաղաքք եւ աւանք կամայանան, ամենուրեք տեսանելի սրբեւայրիք, որոց ամուսինքն կենդանի են»: Բնաւորք յարակայելով ի կարծիս թէ ձեռնարկութեան յաջողութիւնն Ս. Բէրնարից է կախեալ, առաջարկեցին նմա զօրաց հրամանատարութիւնն. բայց նա աւելի իմաստուն քան զՊետրոս Անապատականն՝ մերժեց:

Եթէ Լուի Է. սխարլեց խաչակրուելով, ապա քանի՞ն մեծ եղել կոնրազ Գ. *) Գերմանիոյ թագաւորի սխարն, որ այնքան զործեր ունէր կատարելու ի Գերմանիա: Վասն այդ պատճառի սկզբում սակաւ համակրութիւն յայտնեց Ֆրանսայի թագաւորի ձեռնարկութեան: Ս. Բէրնար մի շրջաբերական թուղթ էր առաքել Գերմանիոյ պետութեանց, կամենալով ներշնչել ի նոսա մի եւ նոյն ազդեցութիւնն, որով լցուցեալ էր բոլոր Գաղղիա. իւր ճիգերն անարդիւնք

(*) Լօթերիոսի մահուանէն զինի ընտրեցաւ կայսր Գերմանիոյ կոնրազ դուքս Ֆրանքոնիոյ. սա է Լօճէնստօֆէնի հարստութեան (որ տեւեց մինչ ի 1154) առաջին թագաւորն: Իւր ընտրութիւնն տեղի ունեցաւ յերուլաշաբէլ 1158 թին. ի կայսրութեան կոնրազի Լոտինայ քաղաքի ընտելիք կամենալով վերականգնել իւրեանց տէրութեան նախկին ստորն, հաստատեցին Լանքապետութիւն, Ծերակոյտ եւ Պօն. ապա զրեցին կոնրազի թէ մեր յամենայնի հաւատարիմ մնալով շեզ, կամենում ենք զուրի զնելով քեզ՝ վերանորոգել Լոտինայեցոց նախկին մեծապանծ ինքնակալութիւնն. այդ պատճառաւ խնդրում ենք քեզ զայ եւ քնակել ի Լոտմ, ուր ազատ լինելով կղերի տիրապետութեանց բոլորովին կը կառավարես այս աշխարհի մայրաքաղաքից Գերմանիան եւ Իտալիան:

Այս ոտանաւորով էին համառօտում իւրեանց խնդիրքն:

Rex valeat, quidquid cupit obtineat, super hostes Imperium teneat, Romæ sedeat, regat orbem Princeps terrarum, ceu fecit Justinianus, Cæsaris accipiat Cæsar, quæ sunt sua Præsul Ut Christus jussit Petro solvente tributum.

Արքայ ողջ լեր, զինչ եւ բզձա քո թշնամեաց ընկալչիր Զգերագոյն իշխանութիւն ժառանգիր, Լոտմ նստիր, Կառավարիր նահանգն աշխարհի մայրաքաղաքի

հանդոյն Յուստինիանոսի.

Կեսարից ընդունիր Կեսար եւ զնեա լեր նուաճել

Լոզուստրականութիւնն,

Որովհետեւ Քրիստոս հրամայեաց եւ Պետրոսին

վճարել զլիսահարկն:

Ընթերցողք անշուշտ հասկացան թէ ինչ էր պատճառն, որ Պետրոսը ստիպում էր կոնրազին Ս. Բէրնարդոսի միջոցաւ զնալ մի արշաւանք անել ի Պաղեստին. կայսրն սրտաբեւալ ի բանից պատիւի, որից իւր տեղ թագաւոր 1147-ին իւր որդի Էնրիկոսը, եւ զնաց Սուրբ Երկիրն: Իւր վերադարձի յաջող արարում մեռաւ Էնրիկոս ի տիս երիտասարդութեան: Կոնրազ ինքն էլ զբաւեցաւ ի կենաց ի 1152-ին 58 ամաց:

Ս. Թ.

չեղեն. բայց այն պատահարքն, որք ի ժամանակա առաջին Խաչակրութեան ողողեալ էին արեամբ Գերմանիան, վերանորոգուեց. մի Ֆանատիկ ճղնաւոր Բաուլ անուամբ քարոզեց մի խաչակրութիւն Գերմանիայում՝ ոչ թէ միայն ընդդէմ Մուսուլմանաց, բայց առ հասարակ բրիտտոնէութեան թշնամեաց. եւ այնպիսի հալածանք հանեց Հրէից վերայ, որ միայն Ս. Բէրնարի իշխանութիւնն (այդ միջոցին նա եկեալ էր Գերմանիա) կարողացաւ չափ զնել: Կլէոօլտ արքայն (Բէրնար) չորաւ ի Ֆրանքֆորթ եւ առաջարկեց թագաւորին խաչակրուիլ. բայց Կոնրազ՝ որ Պաղեստին զնացած էր եւ տեղեակ էր այդ արշաւանաց զժուարութեանց՝ մերժեց: Սակայն Ս. Բէրնար չը վնասեց. զնալով արքայի հետ ի Սպիր, եւ ի ներկայութեան նորա պատարագելով, յեղակարծում ժամու զիմեց առ նա. եւ այնքան ազդու կերպիւ նկարագրեց այն բարիքը, որ բրիտտոնէութիւնն սպասում էր խաչակրութիւնից՝ եւ այն պատահարք՝ զոր պիտի կրէր խցելով իւր լսելիքն Աստուածային պատուիրանաց, որ թագաւորն յուզուելով զոչնց — «Պատրաստ եմ ծառայել ըստ հրամանի Տեառն», սուրբ անձն առժամայն կապեց խաչն, որին հետեւողք եղեն կայսրութեան շատ իշխանքն, ի թիւս որոց Ֆրէդէրիկ Լօճէնստօֆէն եղորորդի արքային, որ երեւելի է Պարպարոսս անուամբ. Վլասիսլաւ Բ. զուքս Բօհիմիոյ եւ արքայի եղբայր պատմադիր Ռոժոն եպիսկոպոսն:

Գերմանացիք առաջինքն եղին, որ սկսեցին չուել ի 1147-ին: Զօրաց մէջ կային 70,000 զրահաւորեալ ճիւղորք, առանց հաշուելոյ հետեւեակ զօրքն, վինաւորեալ կանայքն եւ այն հրոսակաց խուճրն, որ հուղ կահարութեան յուսով խաչակրուեալ էին, եւ այլք: Լուի Է. եւ Գաղղիացիք մի քիչ անազան ճանապարհ անկան զրեթէ մի եւ նոյն թուով: — «Այս զօրքս, ասում է Գլյուօմ ժամանակակից պատմադիրն, բաւ է բոլոր արեւելք տիրապետելու, եթէ Աստուած չը մերժէր այդ մարդկանց ծառայութիւնն»:

Մանուէլ Կոմնենոս *), որ կը պարսպէր յայնժամ Կ. Պօլսոյ զանճ՝ զարհուրեց, մի զուլէ այդ զօրք:

(*) Սա էր որդի Յովհաննէս կայսր: Արի էր ի պատերազմուս, բայց ոչ ընդունակ զօրաց կառավարութեան մէջ. զործունեալ եւ առարկի, բայց ճեղգճեղ վատթարելով ի շրջորթթաց, եղել զժնեայ եւ բանակայ: Յաջորդեց իւր հօր 1145 թն եւ մեռաւ 1180 թն: Այս կայսրս երեւելի է ի պատմադիրս Լայոյթը

ըրդ գալիս է օգնութեան ձեռք կարկառել Սիկիլիոյ Ռօմեր Բ.ին, որի հետ պատերազմ ունէր: Կոնրադ ինդրելով որ թոյլ տան իւրեան անցանել եւ հայթայթել զօրաց ուտեսան արծաթով, Մանուէլ պահանջեց որ համայն Քրիստոնեայք երդուեն հաստատուն մնալ ի խաղաղութեան. այս մասին Խաչակիրք ոչ մի պատճառ չունենալով մերժելու, երդուեցան: Սակայն ի զուր եղեն Կոնրադի ջանքն, որ իւր ճամբարն ոչինչ նեղութիւն եւ գայթակղութիւն չը պատճառէ. սարսափելի սճիրք զործեցան, որոց արգասիքն եղեն թշնամսկից եւ արիւնահեղ պատերազմք. ի հակիրճ բան, Կոնրադ հասաւ ի Պէրա, (արուարձան Պօլսոյ.) չը տեսաւ Կայսեր, որ իւր աներծագն էր: Յամեսանն սեպտեմբերի 1147 Խաչակիրք անցան յԱսիա. անդ երկու շաբաթ կը ներկայանար նոցա առաջեւ, առաջինն՝ առընթեր ծովի ամենաապահովն էր, բայց երկարագոյն. երկրորդն էր Կոնիոյ ճանապարհն, որ թէեւ ամենակարճն՝ բայց ամենախտանգալին էր: Կոնրադ այս որոշեց:

Շուտով խաչակիրք Յունաց նենգութեան փորձն առին. կը հուանէիմք ասել, որ արեւմտեան հեղինակք յանպէսս գոյով այն ազգաց լիզուաց, որոց հետ պատերազմ ունէին, զձապրել են այդ դէպքդ անհաւատարիմ ազրիւրից կամ թէ չափազանցութեամբ պատմեալ են, եթէ Մանուէլի պատմագիր Նիսէտան չը հաստատէր նոցա զանդառքն: Խաչակրաց տուին այնպիսի ուղեցոյցք, որ նոցա կառաջնորդէին ի կիրճս եւ ի դարանս. հազիւ թէ կը հասանէին մի քաղաքի առաջեւ, զորունքն փակած կը դտանէին. եթէ կամենային հայթայթել իւրեանց պարէն, պէտք էր որ առաջ դնէին իւրեանց արծաթն այն զամբիւզաց մէջ որ պատի վերելից կը կախէին. եւ լազվիցս ընակիչք առնե-

լով արծաթն կաներբուռեանային: Հացի մէջ կիր կը խառնէին. եթէ ունէին մի բան վաճառելու կամ՝ մի զուար փոխելու, կը վճարէին նոցա ունպէտ զբամ, որ յետոյ ինքեանք կը մերժէին առնուլ: «Եւ զի պատմեցից—ասում է Հեղենացի պատմաբանն—ամենայն տեսակ չարութիւնք ի կիր արկին շրջել նոցա միտքն՝ որ վերստին չգան յերկիր կայսրութեան Յունաց»:

Զկնի բաղմօրեայ, դաժան եւ երկար ընթացից Խաչակիրք Կոնիոն հատանելու տեղ, ուր իւրեանց ուղեցոյցքն պիտի առաջնորդէին, փակուեցան մի կրճի մէջ. ուր Մաղսուտ սուլթանի սպարապետն յարձակեց յանակնկալս. եւ բոլորովին ի փայտուտ դարձրաւ նոցա: Միայն 7000 անձինք վերձան ի մահուանէ կամ ի գերութենէ. Կոնրադ ի թիւս սոցա էր: Այժմ պիտի տեսնեմք, որ պատահեց նա Գաղղիոյ թագաւորին ի Նիկիա:

Ֆրանսիայի արքայն իւր երկրի կառավարութեան համար մի խնամակալ կարգելէն ու եւզինէս Գ. պապի ձեռից Ռի Ֆլամն *) առնելէն զկնի անցաւ Յունիսի 29 ի 1147-ին Հոննուսից ի Վօրմս, ուր ուտելեաց սղութիւնն հարկադրեց մի բանի իշխանքը Խտալիոյ ճանապարհն բռնել: Լուի Յայնրի հետ ունեցած անհաճոյ վիճից յետոյ հասաւ Հոկտեմ. 4-ին ի Կ. Պօլիս, ուր ըստ օրինակի Ռայմոնդ կոմսին Թուրքի երդուեց. իւր հետեւող իշխանք մատուցին իւրեանց հպատակութեան յարգանքն Մանուէլի, որպէս արարեալ էր եւ Գօտթիբուս Բույլոմ:

Ի Նիկիա հանդիպեց Գերմանական զօրաց բեկորքին. Կոնրադ թողով իւր 7000 զօրքն Գաղղիոյ արքային եւ օգտաւէտ խորհուրդք տալով նմա, վերադարձաւ ի Կ. Պօլիս, իւր առողջութիւնն դարմանելու եւ նորեկ զօրաց զալստեան սպասելու պատրուակաւ: Բայց ստոյգն այն էր, որ ամաչում էր հետեւել Ֆրանսիայի թագաւորին այնպիսի մի աղէտալի վիճակում: Խորհուրդ տուաւ Լուիին Զմիւռնիոյ եւ Եփեսոսի ճանապարհն բռնել, որպէս զի եւ նա չհանդիպէ իւր կրած արկածից: Բայց հազիւ անցաւ Գաղղիական ճամբարն ի Մէանդրէ, իւրեանց առաջնապահ զօրքն ընդ հրամանատարութեամբ Ժէօֆրուայ Բանսօնի

նախ, որ միշտ պատերազմ ունէր Լեոնի որդի Թօրոսի հետ եւ շատ ստանանց Կիլիկիոյ, որդէսլպիտի տեսնենք յընթաց պատմութեան. երկրորդ, որ նկատու էր միացնել Հայկական եւ Յոնական եկեղեցիքն, որոյ պատճառաւ մեծ հակաճառումն ունեցաւ, զրահմանապէս Գրիգոր Պաղատուեոյ եւ ապա նորա չեղօք Ներսէս Շնորհաւոյ ձեռ: Այն նամակներն զոր միմեանց գրեցին, մենք կարող ենք տեսանել Շնորհաւոյ ընդհանրական գրքի մէջ, յորում սուրբ Հայրապետն լիուրի նկարագրում է Հայաստանեայց Եկեղեցոյ ուղղափառ ծէսքն եւ արարողութիւնքն, եւ տեղեկացնում է մոլեռանդ Յունաց որ հերձուածօղ կը համարէին զմեզ, թէ որքան ուղղափառ եւ առաքելական հիմանց վերայ է հաստատած մեր Ս. Եկեղեցիքն: Արդէն յայտնի է որ զոյն միութիւնդ զլուի չեկաւ:

(*) Ռի Ֆլամն է նախի Գաղղիացի թագաւորաց պատերազմիկ զրօշն, որի հովանաւորութեան ներքոյ միշտ կը յաղթէին թշնամաց, որպէս կը պատմեն:

յանտկնկալս ըմբռնուեցաւ ի Տաճկաց եւ յօշոտուեցաւ. արքայն՝ որ անդ կգտանուէր՝ շնորհիւ իւր զարմանալի բաշուժեան զերծաւ ի վտանգէ. եւ հասանելով Փետրվարի 2 ին 1148 յԱտալի նաւահանդիստ Յունաց, մտաւ ի նաւ դնալ յԱնտիոք: Այսպիսի նենդուժեամբք մատնեցին Յոյնք Խաչակրաց՝ յառաջոյ իրադեկ առնելով Տաճկաց, կողոպտեցին եւ փակեցին նոցա յանառողջ վայրս, ուր յոգունք կորան ի հիւանդութենէ եւ յանօթութենէ: Հագարեակ ապարախտ Գաղղիացիք նախամեծար համարեցին անձնատուր վինել Տաճկաց, քան զրաւել ի կենաց զժողակ մահուամբ այնպիսի քրիստոնէից մէջ, որք միայն եւ եթ անունն կը կրէին. մի փոքրիկ մասն միայն հասաւ յԱնտիոք:

Ի 25 Մարտի 1148 Լուի Երիտասարդն եհաս յԱնտիոք. մի քանի օր յառաջագոյն Կոնրադ Գ. ժամանեալ էր յԱրեայ. երկու վեհապետք մտին յերուսաղէմ տարրեր ժամանակաւ ի միմեանց: Երբ հասաւ իւրեանց զօրաւիզ զօրք՝ միացան ընդ Պըւսվէն Գ. ի Երուսաղեմայ արքային յարծակել Գամասկոս քաղաքի վերայ, որ յայնժամ մի առանձին իշխանութիւն կը կազմէր*): Այս ձեռնարկութիւնս ի զերեւելաւ մի նենդութեան առթիւ, եւ արտադրեց ահազին տղէտք Խաչակրաց, այլև մի աճեթալի փախուստ: Երկու թագաւորք այն ժամանակ պաշարեցին զԱսկալօն. բայց Պաղեստինոյ Քրիստոնեայք՝ ընդ որս ժամադիր էին եղեալ, զլանալով կատարել իւրեանց պարտքն, Խաչակիրք յետս քաշուեցան՝ ութ օր մի անշահաւէտ յարծակում առնելէն զկնի:

Չզուելով Քրիստոնէից անվստահութենէն երկու վեհապետք՝ ցանկացան վերադառնալ ի պետութիւնս իւրեանց, թողլով Պաղեստինոյ Քրիստոնեայքն յիւրեանց վիճակ երկպառակութեան: «Նկատողութեան «արժանի է — ասում է մի պատմաբան Խաչակրաց, «որ Յուրք երկրում բնակեալ Ղատին Քրիստոնեայք «բնաւին յետս էին կասել իւրեանց հարց քաջութեանէն եւ բարեպաշտութենէն: Անզոյաբար յարեալ «էին այդ օտար երկրին որպէս իւրեանց ծննդական «աշխարհին եւ երկարակեցութեան պատճառաւ ըն- «տանեկան կապերով միացած էին ընդ բնիկս. թէ «Գաղղիացիք, Գերմանացիք եւ թէ Անդղիացիք ա- «մուսնացեալ էին ընդ Հայուհիս եւ տմանք ընդ մահ-

«մետականուհիս որք քրիստոնէութիւնն կը զաւանէին: «Ով որ կը՛գտանուէր ի Պաղեստին՝ կը հրաւիրէր իւր «յեւրոպա մնացեալ ընտանիքը զալ եւ վայելել ի հոն- «գտութիւն: Յոլով խղճով էութաւորք ձեռ էին «բերել խոստացեալ երկրում հարստութիւնք եւ ժա- «ռանգութիւնք. հազարեակ սեպուհք, իւր յարեւմուտս «միայն մի քանի ստրուկը կը՛ժառանգէին, ի Սիրիա «Ֆեղեալ էին տէր մի քանի քաղաքաց կամ համրո- «ցաց:»

«Արեւմտեան նահանգաց Եւրոպացւոց տեղափո- «խութիւնն մի հարուստ եւ բարեբեր երկրում, մեղ- «կացրու նոցա վարքն: Մասակ կամ Պառլէն անունն «որ կը տային ի Պաղեստին ձեռեալ Ղատինացւոց, կը «յայտնէր մի իզացեալ բնութեան հանգամանքն, այն «է խաբէութեան եւ խորամանկութեան: Պուլէնք «(մատակը) ընդունեցին Արեւելեան բնակչաց հա- «զուստն, նոցա շուայրութիւնն, զեխութիւնն, անհո- «գութիւնն նա մանաւանդ այն նախանձն, իւր կը փա- «կէին իւրեանց կանայրն թագցնելու օտարի աքրից «եւ որ արդասաւորեց այդ սեռի մէջ բծնութեան եւ «նենդութեան խորհուրդ:»

Կոնրադ Գ. մտաւ ի նաւ 8 սեպտեմբերի 1148 ամի իւր արքեպիսկոպոս Ֆրէնզինժէնի Նեղոք եւ այլ իշխանաց հետ: Իսկ Լուի Ն. կատարելով 1149 տարուայ Չատիկն Երուսաղէմ, ապա ճանապարհ ընկաւ:

Այսպէս՝ մի ճանապարհորդութիւն, որ քրիստոնէութեան երկու հզօր թագաւորք ձեռնհարկին իւրեանց երկրից ընտր ազնուականաց հետ՝ վերջացաւ առանց որ եւ իցէ մի արդիւնք արտադրելու: Հասարակաց կարծիքն զՍ. Բէրնար մատնեց, որ մի յաջող ելք խոստանալով այդ ճանապարհորդութեան այնքան հազարաւոր անձանց կորստեան պատճառ էր եղել. բայց նա մի ջատագովական թուղթ հրատարակելով բացէ ի բաց հերքեց այդ կարծիքը յայտնելով, որ զօրապետաց անհմտութիւնն եւ եւս առաւել Աստուածային բարկութիւնն էր պատճառ եղել:

ԳԼ. ՀԻՆԳԵՐՐՈՐԳ.

**Թագաւորութիւն Երուսաղեմայ ի 1148է
Ֆրէնզինցի որդիս ի 1187:**

Մէլիսանդ թագուհին յար ընդ միշտ կառավարէր Երուսաղէմայ թագաւորութիւնն իւր սրբոյ Պըւսվէն

(*) Մինչեւ որ 1154 ին Նուրզդին առաւ:

Գ ի անուամբ, որին զեղեցիկ դատարարակութիւն էր ընծուել եւ յապահովի էր կացուցել պետութիւնն, վերանորոգելով Գազայ քաղաքի ամրութիւնքն, որ Տաճարական ստանձնեցին պաշտպանել արիաբար: Մէլիսանդ կիշխէր ոչ թէ մի տկար եւ անհաստատ խնամակալուհւոյ պէս, այլ մի բացարձակ վեհապետի իշխանութեամբ: Նա համարում էր իւրեան իսկ տիրուհի թագաւորութեան: Պատճառ, որ Ֆուլք իւր միջոցաւ էր ընդունել արքայական թագն: Սակայն թագաւորութեան սեպուհք ի նախանձ շարժեցան Մանասէի վերայ, որ էր Գօնդատար (սպարապետ) եւ ազգական դշտոյին, քանզի վերջինս մեծ իշխանութիւն էր տուեալ նմա: Պըսովէն ինքն հասանելով իւր քսանեւէկերորդ տարին՝ ի յեղակարծում ժամու դըրաւ թագ ի զուլիս 1152 ին, առանց թագադրել տալոյ եւ իւր մայրն, որպէս նա ցանկացած էր: Բայց արժան դատեց մի դաշնադրութիւն անել ընդ Մէլիսանդի, որով թագաւորութիւնն բաժանուեց յերկու մասունս: Տիրոս, Աքեայ եւ բոլոր ծովեզերեայ քաղաքքն իւրեան, իսկ Երուսաղէմ եւ Սիւլէմ իւր մօրն. բայց ստրջալով այդ կարգադրութեան վերայ ղեռաւորց իշխանն եղծեց դաշն եւ սկսաւ պայքարել իւր մօր հետ. միայն արեան հեղմամբ Մէլիսանդ հրաժարուեց Երուսաղէմից եւ բաւականացաւ միայն Սիւլէմ քաղաքաւ:

Այդ իսկ տարում 1152 ին Հըսամուտտին Թէմուրտաշ եւ իւր եղբարք յանկարծ երևեցան Երուսաղէմայ առաջեւ, որ մնացեալ էր անպաշտպան. բայց Քըրիստոնէից զօրքն սրացան յօգնութիւն մայրաքաղաքին եւ ի փախուստ դարձոյց զնոսա:

Արիացեալ այս յաջողութեամբ Պըսովէն Գ, մտադիր եղև առնուլ ի ձեռաց Ֆամմայ խէլիֆայից Ասկալօնի ամենակարեւոր ամրոցն, որ Արեւելցի կանուանէին Հարսնացու Սիւրիոյ: Յաջողեց զինի եօթնամսեայ սլաշարման ի 19 օգոստոսի 1159 ի՛ տալով այդ քաղաքը իւր եղբօր Ամուրիային, որ արդէն եղեալ էր կոմս Յոսպպէի:

Ասկալօնի յաղթութիւնն մի նոր աղէտք արգասաւորեց Քրիստոնէից համար: — Դամասկոսի կործանման պատճառ եղև, որ իւրեանց պատնէշ էր կայանում ընդդէմ Նուբիանի ի ժամանակա թագաւորութեան Մօջէրուզիինի, որոյ հետ ունէին բարեկամութիւն. Աթաբէղն Ասկալօնի կորստեան պատճառն Դամաս-

կոսի իշխանի անհողութեանն տալով, դրաւեց 1154 ին նորա բոլոր երկիրն, շարունակելով վճարել Երուսաղէմայ թագաւորին 8000 Տիրոսեան ղեմար հարկն, որ Մօջէրուզիին տալիս էր: Ի 1156 Պըսովէն Գ՛ զինադուլ առնելով ընդ Նուբիանի հրաժարուեց այդ հարկից, բայց հուն մի ժամանակէն զինի բակելով դաշինքն ստացաւ իւր պատիժն չարաչար յաղթուելով Մեուեալ Նուբի առընթեր ի 18 յունիսի 1157 ամի. Նուբիան մի մեծ կոտորած տուաւ նորա զօրաց, որ մինչ յայնժամ Պաղեստինոյ քրիստոնեայք չէին կրած, թէ եւ ի փոխարէն հանեցին իւրեանց վրէժն ի 15 յունիսի 1158 Թիպէրիոյ լճի պատերազմի մէջ, ուրանոր Նուբիան մազապուրծ փախաւ:

Անտիոքայ եւ Տրապոլոյ իշխանութիւնքն սնուցին մի քանի յեղափոխութիւնք Պըսովէնի ժամանակ, որք ազդեցութիւն ունեցան Երուսաղէմայ վերայ:

Ի 29 օգոստոսի 1149 Բայմօնդ իշխան Անտիոքայ սպանուեց Անապայի պատերազմի մէջ, որ անխոհմարար մղեալ էր Նուբիանի դէմ: Առստանսիա իւր կինն կառավարում էր իշխանութիւնն, որպէս իւր սեպհականութիւնն եւ խնամակալուհի իւր Բօէմօնդ որդւոյ: Նոյնպէս Բայմօնդ իշխան Տրապոլոյ ի 1154 սպանուեց այդ քաղաքի դրան առաջեւ. իւր համանուն որդին մետասանամեայ յաջորդեց նմա ընդ խընամակալութեամբ իւր Հօթիէր մօր, որ էր քոյր Մէլիսանդի: Այլ եւ ճոսլին Բ. անուանակիր Եղեսիոյ կոմսութեան՝ անկաւ ի ձեռս Աթաբէղի եւ եղաւ ի դիպահոջ:

Սակայն Կոստանսիա որք ի 22 րդ հասակի 1152 ին աժուանացաւ վերստին ընդ Բընօյդ Շատիլլօնի իշխանին Կրաքի եւ Մոնարէալի որ յապառաժն Արաբիսսա էր մի անբարոյական, կրքոտ եւ կատաղի անձ, որ լցոյց շփոթութեամբք զպետութիւնն:

Բայց հարկն աստ ստիպում է զվեզ վերադառնալ միւսանգամ դէպ ի Կիլիկիա: — Մանուէլ կայսրն լսելով Թորոսի արարքն*) յոյժ զայրագնեցաւ եւ ուղարկեց Անդրոնիկոս զօրապետն Թորոսի վերայ. այդ մասին խնդրեց Շատիլլօնէն սատար լինել իւր զօրապետին: Բայց Թորոս իւր բնական քաջու-

(*) Տես ի զուլի Գ:

Յեամբ վանեց բոլոր Յունաց զօրքն եւ ձերբակալեց նոցա զօրավարքն. կայսրն իրազեկ լինելով՝ զնեց այն զօրավարքն եւ Շատիյոսի միջնորդութեամբ հաշտութիւն կապեց ընդ թորոսի, որ տուաւ նմա (կայսեր) ի պարզիւ Անարզարա քաղաքն: Սակայն զուն ինչ ժամանակէն զկնի, թորոս տեսանելով որ Յոյնք հաստատ ոչ մնան ի խաղաղութեան եւ դաւաճանութիւն խորհին ընդդէմ իւր, վերստին զէնք առաւ եւ զբուեց Անարզարա, Մամեստիա եւ այլ Յունաց վերարերեալ քաղաքքն: Կոմնենոս յահազինս կատարելով վերստին առաքեց զԱնդրոնիկոս, բայց անվեհեր թորոսն պատեհ առիթ դիտելով մի անպիսի կատարեալ յաղթութիւն արաւ Յունական զօրաց վերայ, որ հազիւ Անդրոնիկոս մի քանի արամբք զերծաւ ի մահուանէ:

Այդու ամենայնիւ դարձեալ չը խրատուեց Մանուէլ եւ ըստ որում Անդրոնիկոս հետեալ էր՝ յղեց իւր ազգական Կարամանոսն ճնջել ի Կիլիկիա եղեալ բոլոր Արամեան ցեղն. աստ եւս բախտն յաջողելով թորոսի՝ ոչ թէ միայն յաղթեց զօրապետին, այլ եւ ձերբակալելով զնա վաճառեց կայսեր սուղ գնով, որպէս վկայում է նոյն ինքն Նիկեոսա: Գովաւ եւս առաւել հաստատուեց Ռուբինեանց իշխանութիւնն, մանաւանդ երբ թորոս առաւ Տարսոն քաղաքն ի 4455 ին եւ մի արշաւանք արաւ Իսաւրիայում, որով ահ ազդեց Յունաց եւ զարմացոյց Լատինացիքը մինչ այնքան, որ Պրովէն Գ. խնդրեց իւր զործակցութիւնն*):

Կայսրն վարանելով եւ մի ճար չգտանելով դիմանալ թորոսի արուածեան, ատումէ ժամանակակից Հով պատմագիր Սմբատն, սկսաւ հրապուրել եւ ողորել ընծայիւք Իկոնիոյ Սուլթան Մաղսուդին, որպէս զի պատերազմ բանայ ընդ թորոսի: Մաղսուդ թէ եւ երդմամբ դաշն էր կապել թորոսի հետ հաստատուն մնալ ի խաղաղութեան, սակայն զիջանելով Կայսեր խնդրանաց՝ ասպատակ սփռեց ի Կիլիկիա**): Այս անգամ թորոս զրեթէ առանց պատերազմի յաղթեց Սուլթանին. մի սոսկալի ժանտախտ ծաւալեցաւ Մաղսուդի բանակի մէջ, եւ անհամար բազմութիւնք շարդեց. միւս կողմէն թորոսի եղբայր Ստեփանէն պա-

տանելով Սուլթանի որդւոյ Եաղուպին՝ կոտորեց նորա բոլոր զօրքն եւ իւրեան էլ սպանեց: Այս բաւ չը համարելով՝ արին թորոս գնաց զաղանապէս Սուլթանի երկիրն եւ սկսաւ ասպատակել, մինչև որ Մաղսուդ իրազեկ լինելով եւ տեսանելով, որ անկար է յաղթել նմա՝ խաղաղութիւն հաստատեց ի 4455 ին:

Ի 4457 ամի Բընօղ Շատիյոսն ջնայեցեալ Մանուէլ Կոմնենոսի եւ արեւմտեան Քրիստոնէից մէջ եղեալ խաղաղութեան, առանց որ եւ իցէ պատճառի յափշտակեց Կիպրոս կղզին եւ զարհուրելի անգթութիւնք արաւ բանտարկելով կառավարիչն, որ էր ազգական Կայսեր *):

Այդ պատահարքից երկամեայ զաղարմանէն զկնի Կայսրն՝ Կիլիկիոյ կառավարիչ թորոսը նուաճելու պատրուակաւ ահազին բազմութեամբ եկաւ այդ երկիրդ: — Ապա յառաջ խաղաղով տիրապետեց Տարսոն, թիլ եւ այլ քաղաքաց. թորոս չկամենալով դէմ դնել Կայսեր, ըստ որում իւր եղբայր Մլեհն վտարանջեալ էր յիւրմէ, միջնորդ ձգեց Երուսաղէմայ թագաւոր Պրովէնին եւ վերագործնելով Կայսեր Անարզարա եւ Մամեստիա հաշտուեց ընդ նմա: Սիննամոս Յոյն ժամանակակից պատմագիրն, որ կոչումէ թորոսին « խոռագեռ ճարտարահետ », պատմէ թէ Կայսրն անուանեց զնա Սերաստիոս: —

Ի Կիլիկիոյ Մանուէլ սպառնացաւ պատժել Բընօղի լւրջութիւնն, իսկ վերջինս ոչ մի կողմանէ օգնութիւն չը գտանելով՝ ստիպուեց խոնարհիլ Կայսեր առաջեւ, ուստի ժամանելով ի Մամեստիա՝ ներկայացաւ նմա բոկոտն եւ չուան ի պարանոց աղերսելով զթութիւն: Պրովէն Գ. նոյնպէս եկն անդ կրկնել իւր բարեկամութիւնքն ընդ Մանուէլի, որ մի քանի Վեհապետական զործեր ցուցանելէն զկնի յԱնտիոք՝ վերագործաւ ի Կ. Պօլիս: Բայց հազիւ թէ գնաց, Բընօղ սկսաւ ասպատակել ձապլինի հին կոմսութեան մէջ եւ շատ աւար առնել. սակայն ի ճանապարհի գերի անկանելով Նուրդինի ձեռն, 16 ամ արգիլուած մնաց: Իւր իշխանութիւնն կառավարէր Անտիոքով պատրիարք:

(Շատիյոսի մէջ):

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

(*) Չարմանակի է, թէ էր պատ Խութեան հեղինակն ոչինչ չէ յիշում այս մասին:
 (***) Հ. Միք. Չամեան Մաղսուդի որդի Ղլիծ—Սոյանն է դնում:

(*) Այդ արշաւանց մասնակից էր եւ մերն թորոս, ըստ վերջոյն թեման բոլոր պատմագրաց, թէ եւ ինչպէս տեսնուանք զորքս հեղինակն չէ յիշում. այդ եղեւ սպառնա շատ զժրատութեանց Կիլիկիոյ, ըստ որում Մանուէլ լսելով այդ եկաւ ի Կիլիկիա եւ առաւ շատ քաղաքք:
 Թ. Քարդ: